

ԵՍ ԵՒ ԱՆ

(Հանդիպում)

Դուրս իր փոսէն՝ դերդ թափառիկ մենակեաց,
 Փողոցին վրայ, փողիին մէջ թաթառուն,
 Այդ ո՞վ է, ո՞վ, որ ոտքերուս դէմ կանգնած՝
 Խոռոչաւոր աղնարկովն իր տրամաւուն,
 Կը նայի չե՛լտ դէպի անհունն անթափանց,
 Ու դէպի ինձ կը մօտենայ գալարուն:

Ձեռքս առի փոշեթաթաւ թշնամիս,
 Նայեցանք խոր աչքերուն մէջ իրարու,
 Եւ ճանչցանք մենք զիրար. ինքն ալ լուսադիծ
 Ճակատ մ'ունէր երբեմն, այլ ա՛յժմ ահադդու
 Լուծիւնն իսկ է, մահ եւ սարսուռ հողիիս
 Ցանկապատին մօտ՝ նոր ու հին ցաւերու:

Ժամանակն էր լոկ որ ըզմեզ կը բաժնէր.
 Ան ալ ինձի պէս երջանիկ ու թշուառ՝
 Ըզգաց շարժումն արիւնին, տէր Լիամ անտէր.
 Աստղերու թիւը գանկին մէջ բոցավառ՝
 Կարծեց արծիւ ըլլալ, թեւե՛ր բարձունքներ,
 Եւ յուզումի դաշխուրանէն խրմէլ յար:

Բայց խորտակուած օր մ'ալ ինկաւ ճամբուն վրայ,
 Երազներն իր շղթայուցան բրտօրէն
 Մահուան բերդին մէջ անառիկ ու հսկայ.
 Ոչինչ, ոչինչ մընաց իրմէ, իր մարմնէն,
 Բացի վտոր մը ոսկորէն անուղղայ,
 Կառչած հողին, իր փառքերուն անօրէն:

Ոչնչութի՛ւնն ես դու հիմա, անդարման.
 Տըխուր բեկոր՝ զըւարթ կեանքի մը կայտառ.
 Մըտի՛ր, մըտի՛ր ցանկապատիդ մէջ ունայն,
 Մահուան աշխարհն ունի օրէնք անբարբառ,
 Անմեկնելի, անչարժ եւ նոյն յաւիտեան.
 Յարութեան ձա՛յնը դեռ հնչած չէ, թշուա՛ռ:

Ու դարհուրած նետեցի ես զայն ուժղին
 Սեւ որմերէն ներս զառամեալ մահերու,
 Գընա՛ց, Լըպաւ շիրմաքարի մը ոտքին,
 Ու մենք Լըկին նայեցանք հոն իրարու:
 Ո՛հ, մենամարտ աչքերու, նետ անմարմին.
 Այդ պայքարն էր կեանքի-մահուան ուժերու:

ՅԻՇԱՏԱԿ

Վերջալոյսին հետ մեռաւ
 Հեծքը վերջին զանգակին,
 Ու ըստուերները ծարաւ
 Գրկեցին մէջքը քաղքին:

Վենետիկն այժմ կաթուղին
 Հաճոյքին դիրին է ինկեր.
 Ո՞վ կը խորհի անցեալին.
 Քաղցր է ներկան կենսասէր:

Բայց տաճարին քիւին տակ
 Կու լայ կանթեղ մը կարմիր,
 Պըլլըլալով տրամունակ,
 Արիւն արցունք չիթալիր:

Կըչիւն արդար տոժերու
 Օր մը մատնեց զահն ոսկի,
 Ահա այդ մեղքն ողբալու
 Համար կանթեղը կ'այրի:

ՎԵՆԵՏԻԿ

Ճառագայթի պէս բեկբեկուն,
 Հոլովոյթով բաղմաւունակ,
 Կապոյտին ծոցն յարածըփուն
 Արծաթեա՛յ, դո՛ւ, լար ներդաշնակ:

Ծովէն ծընած աստուածուհի,
 Քաղաք չքնաղ երազներու
 Եւ տոժերու զանձն արքունի՝
 Բաղմած գահին վրայ ջուրերու:

Ապարանքներն այն հոյակապ,
 Պարանոցիդ փայլուն մանեակ,
 Գեղեցկութեանդ նարօտ ու կապ,
 Հաղար տարուան անլոյժ քանդակ:

Համանըւագ եւ համաճոյլ
 Յուր, պաճուճանք, գեղ արուեստի՝
 Գոյներուդ հետ բաղմանը՛յլ՝
 Ըզքեղ ըրին տո՛ւն երազի:

Շողի, բոյրի վառ թրթռացման,
 Լոյսի անթիւ փըթթումներու
 Զինջ աւազանն է ոսկեման,
 Ծոցդ, ո՞վ Վենետ, հրաշք դարերու:

Կը հասնի սիւքը նաղելով,
 Ու այտերուդ վրայ կը հանդէլի,
 Աղանիլի թոյլ թեւերով
 Քեզ զըզուելու, մա՛յր դիցունհի:

Ու երբ բեղուն զիչերներու
 Աստղերն հոյլ հոյլ թափին վըրադ՝
 Կ'ըլլաս պարտէզ ծաղիկներու,
 Կ'ըլլաս զմրուխտ եւ աղամանդ:

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Ո՛վ աղետար զարտանք, երա՛ղ կապուտակ,
 Եւ մեղրածոր ո՛վ դու բաժակ քաղցրութեան,
 Աչքերուս դէմ նունուֆարի պէս բացուած՝
 Ալիք ալիք կը հոսիս
 Սրտիս բիւրեղ հունին վրայ,
 Եւ կը հեզնես քաղցրօրէն:

Ափերուդ մէջ սիրտըս փըշրած՝ կը խուսես,
 Ըտտուերէն ալ արագ, տեսի՛լ դառնահամ.
 Կաս ու չըկաս, դիւթանքն ինչպէս կ'անհետի՝
 Հորիզոնէս կը մեկնիս,
 Բոյր ու պատկեր գեղանի,
 Անապատիս ձիւնծաղիկ:

Տուր որ ըսպէ մը նայիմ վառ աչքերուդ,
 Եւ երազի արշալոյսին յանդիման
 Մոռնամ աշխարհն ու ցաւերն իր աղտաղտին.
 Նայիմ չքնաղ կապոյտին,
 Ու թեթեւամ սըլացիկ
 Եթերն ընտրեմ ինծի կայք:

Եթէ գիտնաս թէ ի՛նչ հրդեհ զայրագին
 Հոգւոյս խորանը կը քանդէ խօլաբար
 Եւ դո՛ւն իսկ ես անոր անդուծ քրմուհին
 Որ կը լըքէ ու կ'անցնի,
 Գուցէ գըթաս ցաւերուս,
 Եւ մայրօրէն ինձ ժպտիս:

ԱՅՍ ՊԱՀՆ ԱԼ

Այս պահն ալ, ո՛վ անսահման Բարութիւն,
 Անցաւ, մըտաւ վիհերուն տակ անցեալին,
 Եւ դարձաւ դորը արձագանդ...
 Ա՛յսպէս անդարձ մեկնեցան
 Ո՛րքան կայծեր եւ ապրումներ երջանիկ,
 Ո՛րքան պահեր՝ արծաթ լոյսով լուսնակին,
 Եւ ջերմութեամբը հրտկայլակ արեւուն...:

Բայց ովկեանիդ մէջը անհուն, անդրադարձ,
 Ուր կաթիլ մ'իսկ կեանքի՝ կ'ըլլայ անվախճան
 Յաւերժութիւն լուսերանդ,
 Պիտի դառնանք վերագտնել կաթոգին
 Փունջերն ամէն մեր իղձերուն փըշրեւած,
 Եւ խոկումներն՝ իմաստութեանդ յանդիման
 Այրած հուրով եւ մոխրացած առ յաւէտ:

Դո՛ւն, ճշմարտութի՛ւն անխոտոր,
 Պիտի կերտես խեղանքէն մարդկային
 Նոր նոր աստղեր թեւաւոր.
 Լոկ պիտի աէ՛րը մընայ հոն, կայծն անհունին,
 Եւ փըշուրներն անուշիկ՝
 Անծիր խաչիդ, զոր գրկելով քալեցինք...
 Եւ եթէ քեզ սիրեցինք հոս ջերմագին,
 Մեր սիրտերն հոն պիտ' ըլլան վարդն անթառամ
 Ատտուածային դըրախտիդ...:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ